ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2021 թվականի № Ա
քաղ. Երևան

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՇՈԳԵԳԱԶԱՅԻՆ ՑԻԿԼՈՎ ԱՇԽԱՏՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշումը, 2019 թվականի փետրվարի 13-ի №24Ա որոշմամբ հաստատված «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիայի պայմանների 10-րդ կետը և հաշվի առնելով «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 3-ի՝ սակագնի սահմանման հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանի համար երկդրույք սակագնային համակարգում՝

   1) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝

   ա. 2021 թվականի դեկտեմբերի 11-ից մինչև 2022 թվականի հունիսի 11-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար՝ 19.335 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 23.202 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

   բ. 2022 թվականի հունիսի 12-ից՝ 20.075 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 24.09 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) հզորության դրույքը 6243.36 դրամ/կՎտ՝ յուրաքանչյուր ամսվա պայմանագրային պատրաստական հզորության համար՝ առանց ավելացված արժեքի հարկի և 7492.032 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 11-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.